ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԶՀ-ԳՀԱՊՁԲ-18-4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «03» հուլիսի 2018թ.

2018թ-ի հուլիսի 3-ին ժամը 11:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ **ՀԶՀ-ԳՀԱՊՁԲ-18-4** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արտակ	Պողոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի Ֆինանսական տնօրեն, ֆինանսատնտեսական և բյուջետային ծրագրերի կառավարման խմբի ղեկավար – նախագահ
Արմեն	Ախիյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի մարքեթինգի խմբի ղեկավար -ԳԱ
Խաչիկ	Ավետիկյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցառումների ավագ համակարգող– ԳԱ
Լևոն	Հովսեփյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի նախագծերի կառավարիչ – ԲԱ

Բացակայում էր՝

Մանե	Մաշինյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի իրավախորհրդատու,կորպորատիվ համապատասխանության մասնագետ – ԲԱ

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Հասմիկ Ղահրամանյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գնումների մասնագետ – քարտուղար

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամների 2/3-ը , հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արտակ Պողոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Հասմիկ Ղահրամանյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՀՋՀ-ԳՀԱՊՁԲ-18-4** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. **ՀՋՀ-ԳՀԱՊՁԲ-18-4** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀՋՀ-ԳՀԱՊՁԲ-18-4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Հասմիկ Ղահրամանյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է **ՀՋՀ-ԳՀԱՊՁԲ-18-4** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն :

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ՀՋՀ-ԳՀԱՊՁԲ-18-4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով 1-ին չափաբաժինի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ **«ԿՈԼԼԱԺ» ՍՊԸ** -ի հայտը ճանաչել հրավերի պահանջներին բավարար:

Որոշվեց՝

1. Հասմիկ Ղահրամանյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել **ՀՋՀ-ԳՀԱՊՁԲ-18-4** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները

«ԿՈԼԼԱԺ» ՍՊԸ ՝ բավարար:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ՀԶՀ-ԳՀԱՊՁԲ-18-4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

ՀԶՀ-ԳՀԱՊՁԲ-18-4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ընտրված մասնակից հայտարարել **«ԿՈԼԼԱԺ» ՍՊԸ** ին:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Ղահրամանյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Պողոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Արմեն Ախիյան _____

Խաչիկ Ավետիկյան _____

Լևոն Հովսեփյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Ղահրամանյան _____